

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին իրականացվելիք կինոնախագծերի վերաբերյալ
Գեղարվեստական խորհրդի 2015 թ. նոյեմբերի 27-ի նիստի

Մասնակցում էին՝

Գևորգ Գևորգյան

Սուրեն Համիկյան

Անետա Երզնկյան

Գայանե Սարտիրոսյան

Հովհաննես Երանյան

Մերգեյ Գալստյան

Քննարկվեց՝ 2016 թվականին իրականացվելիք կինոնախագծերը

Գևորգ Գևորգյան. Ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ 2016 թվականին պետք է շարունակվի արտադրության մեջ գտնվող անցումային «**Լակոտը**» (բեմ. ռեժ.՝ Ալբերտ Մկրտչյան), «**Երկար վերադարձ**» (ռեժ.՝ Շավարշ Վարդանյան), «**Թափանցիկ տանիքներ**» (բեմ. ռեժ.՝ Լուսինե Սարգսյան), «**Բրա՛վո, վիրտուոզ**» (բեմ. ռեժ.՝ Ռ. Գետիկյան), «**Հիշողության պատմություններ**» (բեմ. ռեժ.՝ Դ. Բաբախանյան), «**Ինչպես ամերիկյան մի երգ**» (բեմ. ռեժ.՝ Սերժ Ավետիքյան), և «**Վերջին բնակիչը**» (բեմ. ռեժ.՝ Ջիվան Ավետիսյան) ֆիլմերի արտադրությունը.

Այսօր քննարկելու ենք «**Չյունանուշը**» (սցենարի հեղինակներ՝ Արմեն Սիմոնյան, Անահիտ Արփեն, բեմ. ռեժ.՝ Արմեն Սիմոնյան), «**Պատի տակ**» (սցենարի հեղինակ՝ Ղուկաս Սիրունյան, բեմ. ռեժ.՝ Գագիկ Հարությունյան), «**Կտակ**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Մարատ Սարգսյան), «**Վերջին առաքյալը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Գարիկ Մաշկարյան), «**Մայիսյան երկու շաբաթ**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Ռուբեն Գևորգյանց), «**Վերադարձողները**» (ռեժիսոր՝ Հարություն Խաչատրյան), «**Նրա մասին**» (բեմ. ռեժիսորներ՝ Ա. Ազատյան, Ն. Մկրտչյան), «**Երկրաշարժ**» (սցենարի հեղինակներ՝ Ս. Յուդակով, Ա. Գրավիցկի, Ա. Դանիելյան), «**92**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Արման Չիլինգարյան), «**Ճանապարհ**» (ֆիլմաշարի բեմ. ռեժ.՝ Է. Բաղդասարյան), «**Ոչ թեթև ուշագնացություն**» (բեմ. ռեժ.՝ Ն. Բելոուսկենե), «**Այվազովսկի**» (ռեժ.՝ Ա. Բաղդասարյան), «**Տարօրինակ հեքիաթ**» (բեմ. ռեժ.՝ Ս. Սահակյան), «**Հող չափողները**» (բեմ. ռեժ.՝ Ս. Բաբայան), «**Տատիկիս վարսերը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Մարինե Զաքարյան), «**Երևան, իմ քաղաք**» (ռեժիսոր՝ Աննա Արևշատյան), «**Սիրիական ծուղակ**» (սցենարի հեղինակ՝ Միքայել Պողոսով, բեմ. ռեժ.՝ Արշալույս Հարությունյան), «**Արևամուտ**» (սցենարի հեղինակ՝ Անահիտ Արփեն, բեմ. ռեժ.՝ Արմեն Ռոնով), «**Ջիվանի 74**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Դիանա Մկրտչյան), «**Խավարում**» (բեմ. ռեժ.՝ Դիանա Կարդումյան), «**Դատը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Լիլիթ Սովսիսյան), «**Հարճը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Ռուբեն Քոչար) նախագծերը:

«ՉՅՈՒՆԱՆՈՒՇԸ»

(Սցենարի հեղինակներ՝ Անահիտ Արփեն, Արմեն Միմոնյան,
բեմ. ռեժ.՝ Արմեն Միմոնյան)

Մուրեն Հասմիկյան. Այս սցենարը կարծես թե հաջողված է, բայց ես ցնցված չեմ:

Մանկական թեմայով ֆիլմեր, ճիշտ է, չեմ հիշում մեկ էլ երբ է արտադրվել, որին դրական եմ վերաբերվում, սակայն խմբագրել պետք է:

Հովհաննես Երանյան. Համաձայն եմ, գրագետ է գրված, սակայն տեսնված հարաբերությունները փոխել է պետք այնպես, որ կրկնված չլինի:

Մերգեյ Գալստյան. Անհրաժեշտ է թարմացնել, սրել փոխհարաբերությունները:

Անետա Երզնկյան. Կերպարները միատարր են, սահմանափակ, հարստացնել է պետք նաև դիալոգները:

Գայանե Մարտիրոսյան. Հատկապես հանել է պետք գոեհիկ լեզուն: Իսկ հեքիաթը տեսնելու նախապայմանը կա, կան նաև համապատասխան հարաբերություններ: Տեսարաններ կան, կարծես հարմարեցված են, ինչ-որ բան պակաս է հեքիաթի ընկալման համար: Օրինակ, զանգվածային տեսարանները Երևի զգուշացել են, խուսափել մեծ բյուջեից, և հարմարեցրել են տվյալ տեսարանին:

Մերգեյ Գալստյան. Ըստ երևույթին, ռեժիսորական սցենարը գրելիս՝ ռեժիսորը կհամաձայնեցնի սցենարի հեղինակի հետ, և նկարահանելիս՝ հաշվի կառնի մեր դիտողությունները:

Գևորգ Գևորգյան. Մենք նյութն ենք քննարկում, ոչ թե նկարահանումները, և ոչ էլ բյուջեի շատ կամ քիչ լինելու հարցը: Անհրաժեշտ է հայտնել կարծիքը միայն սցենարի կառուցվածքի, գաղափարական բովանդակության վերաբերյալ:

Մուրեն Հասմիկյան. Եթե ի մի բերենք, պետք է առաջարկենք՝ վերամշակվի սցենարը, հարստացվեն կերպարները, դիալոգները, համապատասխանեցնելով լեզուն ու ոճը:

«ՊԱՏԻ ՏԱԿ»

(Սցենարի հեղինակներ՝ Ղուկաս Միրունյան, Գագիկ Հարությունյան,
բեմ. ռեժ.՝ Գագիկ Հարությունյան)

Մուրեն Հասմիկյան. Ես դեմ եմ, սա տխուր, անհետաքրքիր պատմություն է: Խառնված են թուրքը, քուրդը...

Հովհաննես Երանյան. Միգուցե պահպանենք սցենարը, առաջարկենք վերամշակել, քանի որ ես չեմ հիշում Սարդարապատի ճակատամարտի մասին կամ էդ թեմայով նկարահանված որևէ գեղարվեստական ֆիլմ:

Մերգեյ Գալստյան. Ես գրուցել եմ հեղինակի հետ: Նա մտադիր է որոշ փոխուխություններ անել, հիմնովին փոխելու է ֆինալը:

Գայանե Մարտիրոսյան. Հերոսը կորցրել է հարազատներին, դաժանություններ է տեսել, բայց արի ու տես վարվում է թուրքերի նման՝ բռնաբարում է թրքուհուն:

Հովհաննես Երանյան. Առաջարկում եմ՝ վերանայել, վերամշակել սցենարը՝ ուշադրությունը բևեռելով Սարդարապատի թեմայի վրա:

«ԿՏԱԿ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Մարատ Սարգսյան)

Սուրեն Հասմիկյան. Սկզբում ինչ-որ բան հետաքրքրեց, բայց հետո՝ գերիշխողն անորոշությունն էր, անորոշ վիճակները:

Հովհաննես Երանյան. Պարզապես ֆինալը չի ստացվել, մի քիչ խճճված է, ռեալացնել է պետք էքզիստենցիալ խորհուրդը:

Անետա Երզնկյան. Ճիշտ կլինի ձևի մեջ էլ մնա:

Հովհաննես Երանյան. Ես ոչ թե ռեալիզմի մասին էի ակնարկում, այլ իրականի, իրատեսականի:

Քայանե Մարտիրոսյան. Ես էլ եմ գտնում, որ լավ սկիզբ ունի, թեման հետաքրքրում է, հետաքրքիր է նաև հերոսը, միստիկան... Սակայն զարգացումը և ֆինալը, կարծում եմ, պետք է ակտիվացնել:

Սերգեյ Գալստյան. Իսկ ես կարծում եմ, մեր կարդացած սցենարների մեջ լավերից մեկը սա է, և առաջարկում եմ հնարավորինս աջակցել՝ ֆիլմը նկարահանելու:

«ՎԵՐՉԻՆ ԱՌԱՔՅԱԼԸ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Գարիկ Մաշկարյան)

Սուրեն Հասմիկյան. Սրա սկիզբն էլ կարծես թե խոստումնալից էր, սակայն զարգացում չտեսա, ֆինալ էլ չկա:

Քայանե Մարտիրոսյան. Սա ֆիլմ կլինի, եթե բացահայտվի, որ լրագրող Ռավանին սպանող 12-ամյա Դավիթը ով է:

Անետա Երզնկյան. Իրավիճակները լավ են մտածված, հետաքրքիր են հարաբերությունները, սակայն շատ են ցցուն ենթատեքստերը:

Սերգեյ Գալստյան. Չի կարելի սցենարն այս վիճակով բերել հանձնել, սարսափելի լեզու և ոճ ունի: Ինչ-որ գաղափար կա, կարծում եմ, ուղղված գալիք սերունդին, բայց ինչն^ո և աղբանոց, ինչն^ո և են երեք սերունդ գոյատևում աղբանոցում:

Հովհաննես Երանյան. Հայաստանի մասին է ակնարկը, առանց անունը կամ անունները տալու: Տհաճությամբ եմ կարդացել: Էդ աստիճանի կոպիտ սխալներով... և վերջին շնչում լրագրողի հորդորը Դավիթի մորը, թե տուն շինելիս՝ սրտում արև պիտի լինի, պարզ է, թե ում է ուղղված: Եթե մեր խղճի հետ ազնիվ լինենք, երևի ասենք, որ հասել ենք աղբանոց: Երևի: Բայց սա չի կարող ֆիլմ լինել, պետք է ստեղծել արդարացնող իրավիճակներ:

«ՄԱՅԻՍՅԱՆ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Ռուբեն Գևորգյանց)

Քայանե Մարտիրոսյան. Շահեկան կլինի, եթե նյութը ներկայացվի և՛ վավերագրողի, և՛ ստեղծագործողի դիտակետից: Կարծում եմ, շահեկան կլինի նաև, որ հերոսը հերոս չընկալվի, այլ քաղաքի համար ցավող մեկը:

Անետա Երզնկյան. Կերպարները կիսատ-պռատ են, որոշակի ավարտուն դիմագիծ չունեն:

Մերզեյ Գալստյան. Առհասարակ, կերպարների վրա աշխատելու կարիք կա:

Մուրեն Հասմիկյան. Հատկապես գլխավոր հերոսի: Արդյո՞ք հերոսը լուսանկարելուց բացի տեսնում է ժամանակի հոգսերով ապրող մարդկանց:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, ամենաստացված սցենարն է, սակայն սյուժետային գծի կարիք կա, դրվագները միմյանց կապելու խնդիր:

«ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԸ»

(Ռեժիսոր՝ **Հարություն Խաչատրյան**)

Անետա Երզնկյան. Կինոնախագիծը երրորդն է «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձից», «Լևոն. Փակուղուց» հետո և շարունակում է պատմել հայրենիքը թողած, այլ ավերում երջանկություն փնտրող մարդկանց մասին:

Հովհաննես Երանյան. Հայտնի հայազգի նկարիչ Վահան Անանյանի կյանքի պատմությունն է: Նա 80-ականներին էր լքել Հայաստանը: Ըստ երևույթին, ինչպես ֆիլմաշարի նախորդ ֆիլմերում, այստեղ էլ նկարահանումները կատարվել են տարբեր տարիներին, մեծ ընդհատումներով, հետևելով հերոսի կյանքի շրջադարձային էտապներին:

Մերզեյ Գալստյան. Կարծում ենք, յուրօրինակ երևույթ է փաստավավերագրական կինոժանրում, կինովավերագրողը հետևում է հերոսին տասնյակ տարիներ: Այս իմաստով, սպասենք հերոսի ճակատագրի հետագա ընթացքին:

«ՆՐԱ ՄԱՍԻՆ»

(Բեմ. ռեժիսորներ՝ **Ա. Ազատյան, Ն. Մկրտչյան**)

Մերզեյ Գալստյան. Սցենարն ընկերների մասին է, ովքեր պատերազմ են անցել, ու ամեն մեկն այժմ գտել է իր «տեղն այս կյանքում»:

Մուրեն Հասմիկյան. Մակայն թվում է՝ այս խաղաղ օերին ոչին չի կարող խաթարել նրանց հանգիստը, բայց մի միջադեպ, և հերոսն իսկապես կորցնում է քունը, և գտնում է, որ սպանություններ կատարած ռուս զինվորից ոչ պակաս ինքն էլ է մեղավոր:

Անետա Երզնկյան. Թեպետ երկու դեպքերն ու իրադարձություններն անհամեմատելի են, այնուհանդերձ, հեղինակներն ուզում են հակադրել արցախյան պատերազմում կռված մարտիկին ու խաղաղ պայմաններում ծառայող զինվորին:

Գայանե Մարտիրոսյան. Հետաքրքիր է նաև ինքն իրեն հակադրող արցախյան ազատամարտիկը՝ մի կողմից նա պատերազմում հաղթած հերոս է, մյուս կողմից անցյալը նրան հանգիստ չի տալիս: Կարծում եմ, նախագիծն արժանի է աջակցության:

«ԵՐԿՐԱՇԱՐԺ»

(Սցենարի հեղինակներ՝ **Ս. Յուդակով, Ա. Գրավիցկի, Ա. Դանիելյան**)

Մուրեն Հասմիկյան. Սցենարը յուրովի անդրադարձ է 88-ի երկրաշարժի: Ասելիքն էլ է ուրույն: Կառուցվածքը՝ նույնպես: Թվում է, թե հերոսը վրեժ է լուծելու զոհված ծնողների մեղավորի հանդեպ, բայց երկրաշարժը չի թողնում, և մեղավորն ու

վրիժառուն դառնում են ականա գործընկերներ, երկուսն էլ ջանում են հնարավորինս օգնել աղետոյալ համաքաղաքացիներին:

Մերգեյ Գալստյան. Սակայն միմյանց թև ու թիկունք լինող մարդկանց մեջ վխտում են նաև դիակապուտները, որոնցից մեկն էլ հերոսի հորեղբոր տղան է: Նրանք կողոպուտի համար պատրաստ են անգամ մարդ սպանել, նույնիսկ նրան, ով, միգուցե, հենց իրենց բարեկամին կամ հարազատին է փրկում:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, գործողություններն ընթանում և զարգանում են շնորհիվ հավաստի ու համոզիչ հոգեվիճակների: Հեղինակները ջանացել են ներկայացնել առավելագույնը՝ աղետի օրերի ժամանակ ի հայտ եկած մարդկային ճշգրիտ փոխհարաբերությունները: Իսկ մարդկային դրամաների ու վշտերի փարատողը մնում է միայն սերը:

«92»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Արման Զիլինգարյան)

Գայանե Մարտիրոսյան. Ծանոթ եմ նախորդ «88» նախագծին, որ կոչվեց «...և յոթերորդ օրը...», այն ներկայացնում էր դաժան աղետը: Իսկ սա՝ «92»-ը, պատմելու է ոչ պակաս դաժան մուրճ ու ցուրտ տարիները:

Հովհաննես Երանյան. Հետաքրքիր է, որ հենց այդ ոչ պակաս դաժան մուրճ ու ցուրտ տարիներին չի պակասել մարդկանց միմյանց հանդեպ սերը, ավելին, մարդիկ կարծես ավելի են ջերմանում, ավելի հանդուրժող:

Մերգեյ Գալստյան. Ավելի շատ ազդեցիկ է ներկայացման ժամանակ հոսանքի անջատվելը և լուռ ու մունջ հանդիսատեսի մոմերը վառելը: Կարծում եմ, ժամանակը իրատեսորեն ու լավատեսորեն ներկայացնելու լավ նախագիծ է:

«ՃԱՆԱՊԱՐՀ»

(Սցենարի հեղինակներ՝ Էդգար Բաղդասարյան, Քնարիկ Միրզոյան)

Մերգեյ Գալստյան. Սցենարում երեք նովել է առանձին պատմություններով. «Մեքենան», «Մարը» և «Ավելորդը»: Անհրաժեշտ է կարգի բերել, և այն նկարահանման հետաքրքիր նյութ կդառնա:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, երեք նովելն էլ ընդունելի է, թեպետ թեմաներով ու ժամանակներով տարբեր են ու երեքում էլ ճանապարհ կա, այնուհանդերձ, դեմ եմ «Ճանապարհ» վերնագրին, և պետք է գտնել երեք նովելները միացնող-կապող մի այլ վերնագիր:

Սուրեն Հասմիկյան. 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով հայտնի դեպքերից հետո Վաղիմ Մելիքսեթյանը մի օր եկավ կինոստուդիա և ասաց. «Տղերք, Դեմիրճյանի «Ավելորդը» պետք է նկարենք»: Մենք անցանք գործի, կարդացինք, սցենար գրեցինք, բայց հետո պարզվեց թեման բարդ ու դժվարին է, նաև վտանգավոր: Էդգարի ներկայացրած սցենարի կոնցեպցիան դուր եկավ: Կարծում եմ, նովելների հերթականությունը պետք է փոխել, սկսել այսօրվանից և հասնել 11-րդ դար, փնտրել ակունքները, ուր հուսադրող լույս կա: Ինչ խոսք, առաջին նովելի

երկխոսությունները պետք է խմբագրվեն: 2-րդ նովելում հետաքրքիր է, որ հերոսն իր տղային չի փրկում, իսկ ուրիշին փրկում է:

Անետա Երզնկյան. Դեմիրճյանի նովելում շեշտադրումներն են կարևոր: Կարևորը, ունենալ այն կոնցեպցիան, որ մեր տունը քանդվում է այն ժամանակ, երբ ամեն մեկը մտածում է միայն իր մասին:

Գայանե Մարտիրոսյան. Այսօրվանից 11-րդ դար գնալու առաջարկը հետաքրքիր է, և այն անպայման պետք է հաղորդել Էդ. Բաղդասարյանին: Պետք է առաջարկել նաև, որ տեղ-տեղ ձգձգված գործողությունները կրճատվի:

«ՈՉ ԹԵԹԵՎ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ»

(Բեմադրող ռեժիսոր՝ Ն. Բեյլաուսկենե)

Սուրեն Հասմիկյան. Շեշտաքրքիր կառուցվածք են գտել հեղինակները, դերասանին իսկապես մտցնում են ուրիշի կաշվի մեջ, ինչպես գտնում էր Ստանիսլավսկին: Թատրոնը փակվում է և շոկի ենթարկված Լորիկի հետ հրաշք է տեղի ունենում՝ նա սկսում է տեղափոխվել այլ մարդկանց մարմիններ, այնպես ինչպես նախկինում սիրելի հերոսների կերպարանքն էր ընդունում:

Մերգեյ Գալստյան. Դերասանի տաղանդը բժշկում է բոլոր նրանց, ում մարմնում նա հայտնվում է: Նրա արվեստն ի գորու է դառնում բժշկել ոչ միայն հոգին, այլև մարմինը. հիվանդ աղջիկն ապաքինվում է: Նա մեկ հայտնում է հարբեցող հարևանի մարմնում, մեկ էլ վերածվում է պաշտոնյայի, մերթ նա գեղեցիկ կին է, մեկ էլ՝ մահվան շեմին հասած երեխա...

Հովհաննես Երանյան. Իմ կարծիքով, սցենարի կարևոր գրավականն է այն, որ նրա մեջ արթնանում է անսահման կարեկցանք դիմացինի նկատմամբ: Նա վերջապես սովորում է սիրել:

«ԱՅՎԱԶՈՎՍԿԻ»

(Բեմադրող ռեժիսոր՝ Աշոտ Բաղդասարյան)

Անետա Երզնկյան. Կարծում եմ, հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն մեր կինոգործիչները համարյա չեն անդրադարձել: Այս կինոնախագիծը կարևորվում է հենց դրանով, որ վեր է հանում Այվազովսկու կյանքի և գործունեության կարևորագույն էտապները:

Սուրեն Հասմիկյան. Համամիտ եմ գործընկերոջս, որ քիչ ենք անդրադարձել (եթե անդրադարձել ենք) Այվազովսկու գործունեությանը, և կարծում եմ, անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություն՝ նախագծին աջակցություն ցուցաբերելու համար:

«ՏԱՐՕՐԻՆԱԿ ՀԵՔԻԱԹ»

(Բեմադրող ռեժիսոր՝ Մարիա Սահակյան)

Սուրեն Հասմիկյան. Որքան գիտեմ, հայտը վերաբերում է հետարտադրական ծախսերին: Կարծում եմ, նկահանված տեսարաններն ինքնին խոսում են այսօրվա համար կարևորագույն խնդրի մասին:

Անետա Երզնկյան. Վերջերս արտագաղթի թեմային անդրադառնում են ավելի հաճախ, յուրաքանչյուրը՝ յուրովի: Սակայն այս պատմության յուրահատկությունը նրանում է, որ հերոսները հորինում են այն հեքիաթը, որով ապրել են հենց իրենք: Այդ հեքիաթը ուժգնացնում է տարբեր մայր ցամաքներում ապրող տղայի և աղջկա՝ միմյանց տեսնելու ցանկությունը:

Պայանե Մարտիրոսյան. Կարծում եմ, կարող ենք ներկայացնել առաջարկություն՝ «Տարօրինակ հեքիաթ» նախագծի հետարտադրական փուլին աջակցելու համար:

«ՀՈՂ ՉՍՓՈՂՆԵՐԸ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժիսոր՝ **Սուրեն Բաբայան**)

Անետա Երզնկյան. Կարծում եմ, կարճամետրաժ այս ֆիլմն իր փոքրիկ, բայց խորհրդավոր ասելիքը կունենա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ստեղծվելիք բազմաթիվ լիամետրաժ ֆիլմերի հետ:

Սուրեն Հասմիկյան. Ֆիլմի գործողությունները տեղի են ունենում արևմտյան Հայաստանի մոռացված ու անմարդաբնակ մի վայրում, ուր դեռևս կանգուն է միայն մի եկեղեցի: Հերոսները հող են չափում: Ըստ երևույթին, մեր, հայկական հողը, և տարեց հողաչափին օգնող երիտասարդի համար անձանոթ տեղանքը զարմանալի է թվում: Նա բացարձակ անտեղյակ է, թե ով կարող է ապրած լինել այդ վայրերում, ուր եկեղեցի է կանգնած, այն էլ առանց խաչի:

Հովհաննես Երանյան. Միակ ապացույցը տղամարդու գրպանի ժամացույցն է, որի վրայի անձանոթ տառերը պարզվում է հայկական են:

Սերգեյ Գալստյան. Հեղինակն իր բողոքն արտահայտելու է խորհրդանշական կադրերով՝ երբ երիտասարդը հողաչափի ձողը խրում է հողի մեջ, մետաղի ու քարի շփման սուր ու տհաճ ձայն է լսվում...

«ՏՍՏԻԿԻՍ ՎԱՐՍԵՐԸ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ **Մարինե Զաքարյան**)

Սուրեն Հասմիկյան. Ինձ դուր եկավ կանանց կերպարները, սակայն տղամարդիկ, չգիտես ինչու, անհասկանալի ձևով են ներկայացված: Կարծում եմ, զարգացումը փոփոխման կարիք ունի: Ցեղասպանության թեմային շատ զգույշ պետք է մոտենալ: Ես չեմ ուզում, որ ասվի՝ գենոցիդը մեզ էլ փչացրեց:

Հովհաննես Երանյան. Ինչ խոսք, սցենարը մշակման կարիք ունի, սակայն, համամիտ եմ, համոզիչ է ներկայացված կնոջ կերպարը, հիանալի են լուծված ազգագրական պատկերները, սովորությունները՝ արդարացված: Կարծում եմ, եղբոր կնոջ հետ հարաբերությունն էլ պիտի լինի հային բնորոշ: Ձևերը դեռևս գտնված չեն:

Պայանե Մարտիրոսյան. Կարծում եմ, արդարացման կարիք ունի նաև այն, որ հերոսը ձիուն տիրանալու համար մարդ է սպանում: Եղբոր կնոջ հետ ապրելն այլ լուծում է պահանջում: Միգուցե հանել է պետք:

Սերգեյ Գալստյան. Ես էլ եմ կարծում, որ դեռևս պիտի մշակվի սցենարը, ազնիվ մղումներն ու հարաբերությունները նրբագույն արդարացում են պահանջում, բայց որ պրոֆեսիոնալ լեզուն առկա է, կասկած չկա:

«ԵՐԵՎԱՆ, ԻՄ ՔԱՂԱՔ»

(Ռեժիսոր՝ **Աննա Արևշատյան**)

Հովհաննես Երանյան. Ֆիլմը ներկայացնելու է քաղաքի անցյալը, ներկան և ապագան: Այդ ամենը խորհրդանշող առարկան լուսանկարներով լի ճամպրուկն է, որ ձեռքից ձեռք է անցնում, հայտնվելով վեց գործող անձանց՝ քաղաքի տարբեր բնակիչների մոտ, որոնք միմյանց հետ կապ չունեն:

Սերգեյ Գալստյան. Հետաքրքիր է, որ այդ մարդկանցից ամեն մեկն ապրում է իր կյանքով և որևէ մեկն ուշադրություն չի դարձնում այլոց վրա: Ճամպրուկը հայտնվում է մի հերոսից մյուսի ձեռքում այնքան ժամանակ, մինչև նրանց ճանապարհները խաչվում են:

Սուրեն Հասմիկյան. Ամենայն հավանականությամբ՝ նման հեքիաթային պատմության մեջ գերիշխողը հաճելի հիշողություններն են լինելու, և ֆիլմը հարուստ է լինելու գունեղ և վառ կերպարներով, տոնի, երևակայության և երագների զգացումներով:

Գայանե Մարտիրոսյան. Ընդհանուր առմամբ սիրո խոստովանություն է Երևանին:

«ՄԻՐԻԱԿԱՆ ԾՈՒՂԱԿ»

(Սցենարի հեղինակ՝ **Միքայել Պողոսով**, բեմ. ռեժ.՝ **Արշալույս Հարությունյան**)

Սուրեն Հասմիկյան. Կատեգորիկ դեմ եմ կոմերցիոն նախագծերին: Ներկա պահին քաղաքականապես սխալ կլինի այս թեմային անդրադառնալը, էն առումով, որ եթե այսօր ռուսի հետ համագործակցելու եզրերն ընդլայնվում են:

Գևորգ Գևորգյան. Այսօր բոլորովին էլ հայտնի չէ, թե ով է ահաբեկիչը, ավելի ճիշտ, ահաբեկչական գործողություններ հրահրողը... Ամեն ինչ խճճված է:

Գայանե Մարտիրոսյան. Այնուհանդերձ, պրոբլեմը համամարդկային է, պրոբլեմը կա, և լուծում է պահանջում:

Անետա Երզնկյան. Բայց դրամատուրգիական լուծումներ են պետք, որովհետև քաղաքականությունն ինչ զարգացում կունենա, չգիտենք, առավելևս հիմա, փարիզյան զազրելի դեպքերից հետո:

«ԱՐԵՎԱՍՈՒՏ»

(Սցենարի հեղինակ՝ **Անահիտ Արփեն**, բեմ. ռեժ.՝ **Արմեն Ռոնով**)

Սուրեն Հասմիկյան. Համեմատաբար դուր եկավ: Կոռեկտ էր: Խորհրդանշով լուծումը կստացվի, թե՛ ոչ, չեմ կարող ասել:

Անետա Երզնկյան. Հեղինակն ուզում են ուրույն ձևով արտահայտել իր ցասումն աշխարհի վայրիվերումների, քառասյին մրցավազքերի հանդեպ, և այդ ամենի մեջ ներկայացնել հայ ազգի գլխով անցածը, և ցեղասպանության թեման լուծել այս ձևով:

Գայանե Մարտիրոսյան. Ֆիլմն արդյոք չի՞ դառնա պլակատ:

Հովհաննես Երանյան. Նայած թե ով է ռեժիսորը և ինչպես է տեսնում խորհրդանշական լուծումը: Համենայնդեպս պարզ երևում է, որ սցենարի հեղինակը ճնշվել է ռեժիսորի պահանջներից:

Մերզեյ Գալստյան. Ես էլ եմ կարծում, որ հետաքրքիր ֆիլմ կստացվի, եթե խորհրդանիշներն արդարացվեն:

«ՋԻՎԱՆԻ 74»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Դիանա Մկրտչյան)

Սուրեն Հասմիկյան. Գաղափարը դուր եկավ: Ընդհանուր առմամբ՝ հետաքրքիր է, երբ վեր է հանվում հոր և որդու խնդիրը: Հայրը տղային լսի՞, թե՞ չլսի: Դեպի ակունքները կարոտի շեշտը դրված է երեխայի վրա: Ֆաբուլան ընդունում եմ: Կարելի է առաջարկել խմբագրել, մշակել և հարստացնել:

Անետա Երզնկյան. Համաձայն եմ, իսկապես կրճատման կարիք ունի, նաև՝ խմբագրման և մշակման:

Գայանե Մարտիրոսյան. Երեխայի միջոցով լուծվում են համամարդկային խնդիրներ: Այն սցենարներից է, որ կարելի է իջեցնել արտադրություն

Հովհաննես Երանյան. Համաձայն եմ, միակ սցենարն է, որ կարելի է նկարել: Նրբորեն է ներկայացված այսօրը: Հոգեբանորեն լուծված է հոր և որդու խնդիրը: Ինչպես նաև ազգային խնդիր է վեր հանում: Երեխան չի թողնում, որ երկրից հեռանա հայրը: Ես էլ եմ կարծում, կրճատել է պետք և խմբագրել, իսկ վերնագիրը պետք է վերափոխել:

«ԽԱՎԱՐՈՒՄ»

(Սցենարի հեղինակներ՝ Վահրամ Մարտիրոսյան, Դիանա Կարդումյան, բեմ. ռեժ.՝ Դիանա Կարդումյան)

Սուրեն Հասմիկյան. Կարծում եմ, կարելի է նկարել:

Մերզեյ Գալստյան. Ինչպե՞ս: Էլ ուրիշ բան ու գործ չունե՞նք: Հերոսուհին 40 հազարով մարմինը վաճառի մեկ ժամ հետո թոչո՞ղ պարսիկի՞ն, ավելի ճիշտ, չորս պարսիկների՞ն: Ի՞նչ ենք ասում դրանով:

Անետա Երզնկյան. Եթե ուզում ես կնոջ ցավը ներկայացնել, ապա բացարձակ այլ ելք պիտի փնտրել, այլապես սա միմիայն տհաճություն է պատճառում, ուրիշ ոչինչ:

Հովհաննես Երանյան. Չեմ կարծում, որ մարմնավաճառությանը չի կարելի անդրադառնալ: Պարզապես այստեղ իսպառ գեղարվեստ չկա: Հոգվածից առավել տպավորություն չեմ ստացել:

Գայանե Մարտիրոսյան. Միգուցե վերափոխման առաջարկ անենք, հատկապես ֆինալը: Ես, օրինակ, չեմ հավատում, որ հերոսուհին կգնա այդ քայլին:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, ռեժիսորն այլ ելք չունի, պիտի վերափոխի վերջաբանը:

«ԴԱՍԸ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Լիլիթ Մովսիսյան)

Սուրեն Հասմիկյան. Դեմ եմ դաժանություններին:

Գայանե Մարտիրոսյան. Բհարկե դաժան է: Կարծում եմ, պետք է հասցնել, թե եղած միջադեպի հետևանքն ինչ է:

Հովհաննես Երանյան. Դյուրենմատն ասում է. «Ինչքան դաժան, այնքան լավ»:

Մերզեյ Գալստյան. Դաժան է, բայց խորհելու տեղիք է տալիս: Հայհոյանքը միզուցե հանվի:

Անետա Երզնկյան. Եթե մոտիվը կա, հայհոյելն արդարացվում է:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, դաժանությունը մեղմացնել կարելի է, որովհետև հետաքրքիր իրավիճակ է մտահաղացված: Նկատի առնելով, որ ասելիքն ու թեման ինքնին ազդեցիկ է, առաջարկենք քիչ մեղմացվի դաժանությունը, մշակվի սցենարը:

«ՀԱՐՃԸ»

(Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Ռուբեն Քոչար)

Սուրեն Հասմիկյան. Դեմ եմ այս սցենարին: Ավելի ճիշտ, սցենարի նախագծին: Մեր ընկալումները Դանիել Վարուժանի «Հարձի» մասին բոլորովին այլ են:

Գայանե Մարտիրոսյան. Բայց սա ընդամենը սցենարական պլան է և գրված է համանուն պոեմի մոտիվներով:

Սուրեն Հասմիկյան. Միևնույն է, դեմ եմ:

Հովհաննես Երանյան. Կարծում եմ, հստակ պատկերացման և քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել բուն սցենարը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **2016 թվականին շարունակել** արտադրության մեջ գտնվող անցումային «**Լակոտը**» (բեմ. ռեժ.՝ Ալբերտ Մկրտչյան), «**Երկար վերադարձ**» (ռեժ.՝ Շավարշ Վարդանյան), «**Վերջին բնակիչը**» (բեմ. ռեժ.՝ Զիվան Ավետիսյան), «**Հիշողության պատմություններ**» (բեմ. ռեժ.՝ Դ. Բաբախանյան), «**Բրա՛վո, վիրտուոզ**» (բեմ. ռեժ.՝ Ռ. Գետիկյան), «**Ինչպես ամերիկյան մի երգ**» (բեմ. ռեժ.՝ Մերժ Ավետիսյան) և «**Թափանցիկ տանիքներ**» (բեմ. ռեժ.՝ Լուսինե Մարգարյան) ֆիլմերի արտադրությունը:
2. **2016 թվականին աջակցել «92»** (Սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Արման Զիլինգարյան), «**Երկրաշարժ**» (սցենարի հեղինակներ՝ Ս. Յուդակով, Ա. Գրավիցկի, Ա. Դանիելյան), «**Մայիսյան երկու շաբաթ**» (սցենարի հեղինակ և ռեժ.՝ Ռուբեն Գևորգյան), «**Վերադարձողները**» (ռեժիսոր՝ Հարություն Խաչատրյան), «**Նրա մասին**» (բեմ. ռեժիսորներ՝ Ա. Ազատյան, Ն. Մկրտչյան), «**Տատիկիս վարսերը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Մարինե Զաքարյան), «**Ճանապարհ**» (ֆիլմաշարի բեմ. ռեժ.՝ Է. Բաղդասարյան), «**Տարօրինակ հեքիաթ**» (բեմ. ռեժ.՝ Մ. Սահակյան), «**Դատը**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Լիլիթ Մովսիսյան), «**Հող չափողները**» (բեմ. ռեժ.՝ Ս. Բաբայան), «**Երևան, իմ քաղաք**» (ռեժիսոր՝ Աննա Արևշատյան), «**Խավարում**» (բեմ. ռեժ.՝ Դիանա Կարդուսյան), «**Ոչ թեթև ուշագնացություն**» (բեմ. ռեժ.՝ Ն. Բելոուսկենե), «**Այվազովսկի**» (ռեժ.՝ Ա. Բաղդասարյան) ֆիլմերի արտադրությանը:
3. «**Կտակ**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Մարատ Մարգարյան) և «**Զիվանի 74**» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Դիանա Մկրտչյան) կինոնախագծերի **աջակցության առաջարկությունը ներկայացնել դիտողություններին համապատասխան փոփոխումներից հետո:**
4. **Վերանշակել-վերանայել «Ձյունանուշը»** (սցենարի հեղինակներ՝ Անահիտ Արփեն, Արմեն Սիմոնյան), «**Պատի տակ**» (սցենարի հեղինակներ՝ Ղուկաս Սիրունյան,

Գագիկ Հարությունյան, բեմ. ռեժ.՝ Գագիկ Հարությունյան), «Արևամուտ» (սցենարի հեղինակ՝ Անահիտ Արփեն, բեմ. ռեժ.՝ Արմեն Ռոնով) սցենարները:

5. *Մերձել «Վերջին առաքյալը»* (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Գարիկ Մաշկարյան), «Միրիական ծուղակ» (սցենարի հեղինակ՝ Միքայել Պողոսով, բեմ. ռեժ.՝ Արշալույս Հարությունյան), «Խավարում» (սցենարի հեղինակներ՝ Վահրամ Մարտիրոսյան, Դիանա Կարդումյան, բեմ. ռեժ.՝ Դիանա Կարդումյան), «Հարճը» (սցենարի հեղինակ և բեմ. ռեժ.՝ Ռուբեն Քոչար) կինոնախագծերը:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի

Գեղարվեստական խորհրդի քարտուղար